ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ Մ. ՍԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ
(Մ. Սարյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Լրացավ համաշխարհային ճանաչում ունեցող նկարիչ, արվեստի մեծ վարպետ Մարտիրոս Սարյանի ծննդյան 100-ամյակը։

Մ. Սարյանը մեկն էր այն արվեստագետներից, որ Հոկտեմբերի հաղթանակից հետո շտապեց Սովետական Հայաստան՝ ակտիվորեն մասնակցելու երիտասարդ հանրապետության մշակույթի օջախների ստեղծմանը, մեկը նրանցից, ովքեր իրենց տաղանդն ու կարողությունները ի սպաս դրին հարազատ ժողովրդի արվեստի զարգացման, ձևավորման ու հարստացման հայրենանվեր գործին։ «Լուսավորության ժողկոմն իմ բարեկամ Աշոտ Հովհաննիսյանն էր։ Նա ինձ հանձնարարեց ձեռնարկել մի շարք հաստատությունների՝ մնագիտության, կերպարվեստի, պատմության, ազգագրության թանգարանի և մնությունների պահպանության կոմիտեի կազմակերպումը։ Պետք էր հիմնադրել նաև գեղարվեստական ուսումնարան ու նկարիչների ընկերություն։ Կարճ ժամանակում աշխատանքները բուռն թափ ստացան»,— գրում է Մ. Սարյանը։*

Մ. Սարյանի անմիջական նախաձեռնությամբ Հայաստան հրավիրվեցին բազմաթիվ նկարիչներ, արվեստագետներ, կազմակերպվեցին առաջին նկարչական ցուցահանդեսները, թանգարանները, գեղարվեստական տեխնիկումը, նկարիչների ընկերությունը և այլն։ Նա բեղմնավոր գործունեություն ծավալեց Հայաստանի մշակույթի ու պատմության հուշարձանների պահպանման, հավաքագրման ու հարստացման ուղղությամբ։

Առաջին անգամ ընթերցողին ներկայացվող փաստաթղթերի ներկա հավաքածուն, որ կազմվել է Հայաստանի Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվի նյութերից, վկայում է Հայաստանի կուլտուրական կյանքին Մ. Սարյանի ունեցած ակտիվ մասնակցության մասին։

ԷՄՄԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ՄԱՐԻՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

1

Հայաստանի լուսժողկոմի № 107 հրամանը՝ Մ. Սարյանին Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի նախագահ նշանակելու մասին

11 հոկտեմբերի, 1921 թ.
Երևան

Նշանակվում են հոկտեմբերի 11-ից հնության ու գեղարվեստից հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահ ընկ. Սարյան, գիտնական քարտուղար ընկ. Աշխարհաբեկ Լոռու Քալանթար և անդամներ ընկ. ընկ. Բագրատ Հասան-Ջալալյան, Երվանդ Լալայան և Գևորգ Ասատուր։

Լուսժողկոմ՝ Ա. Հովհաննիսյան

Ֆ. 122, ց. 1, գ. 280, թ. 148։ Պատճեն։ Ձեռագիր։

---

* *Մ. Սարյան, Դրվագներ իմ կյանքից, Երևան, 1966, էջ 168—169։*

2

Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի նախագահ Մ. Սարյանի զրույցը լուսժողկոմին՝ կոմիտեի աշխատանքների հետ կապված որոշ կազմակերպչական հարցերի մասին

15 Հոկտեմբերի, 1921 թ.
Երևան

Հոկտեմբերի 15-ի նիստում կոմիտես զբաղվելով մեր աստ ու անդ ցրված հնություններ ու գեղարվեստական իրերի առաքման ու պետական թանգարանում տեղավորելու շտապողական հարցով, որոշեց դիմել Ձեզ ու խնդրել.

1. Նախքան հնադարան-թանգարանի հատուկ շենքի հարդարումը, այժմ կոմիտեիս տրամադրվի մի սենյակ, որ ծառայեր իբրև գրասենյակ և կարելի լիներ ժամանակավորապես տեղավորել հնություններ.

2. Հայց հարուցել Ժողկոմխորհին՝ դիմում անել Խորհրդային Վրաստանի կառավարությանը՝ հնարավորություն տալու և աջակցելու կոմիտեիս ներկայացուցչին Երևան տեղափոխելու մեր այն հնությունները, որոնք վերջին տարիներս քաղաքական անցուդարձի բերումով, ժամանակավորապես փոխադրված են Թիֆլիս և ներկայումս ևս պահվում են այնտեղ, որ են.

ա) Անիի դրամները մի առանձին արկղի մեջ, որ Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտի կարգադրությամբ 1918 թվականի սկզբին Անիի հնադարանից վերցրել ու տարել է Թիֆլիս Դ. Դորտեն.

բ) Առաքելոց վանքի դուռը՝, որ 1916 թվականին Հայաստանից Թիֆլիս է փոխադրել Ս. Տեր-Ավետիսյանը՝ և ժամանակավորապես տեղավորել Կովկասյան թանգարանում՝ էջմիածին ուղարկելու պայմանով, բայց մինչև օրս մնում է այդ թանգարանում.

3. Վերոհիշյալ հնությունները բերելու և մի շարք այլ կարևոր հանձնարարություններով կոմիտես Թրֆլիս և Սանահին է ուղարկում իր անդամ-քարտուղար Աշխ. Քալանթարին և այդ առթիվ խնդրում է անել անհրաժեշտ կարգադրությունները.

4. Կոմիտեիս նույն ներկայացուցչին բաց թողնել կանխավճար, որով նա Թիֆլիսում կարողանա ձեռք բերել կոմիտեիս կարիքների համար լուսանկարչական նյութեր և վերջացնելու ճարտարապետ Կալգինի հաշիվները։

Նախագահ՝ կոմիտեի՝ Մ. Սարյան
Քարտուղար՝ Աշխ. Քալանթար

Ֆ. 122, ց. 1, գ. 278, թ. 9։ Բնագիր։ Ձեռագիր։

3

Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի նախագահ Մ. Սարյանի խնդրագիրը լուսժողկոմին՝ նրա տրամադրության տակ գտնվող որոշ դիմանկարներ պետական թանգարանին հանձնելու մասին

26 Նոյեմբերի. 1921 թ.
Երևան

Խնդրում եմ գրաբերիս հանձնել Ժողկոմխորհում գտնված Հ. Արծաթքան-

յանի[1] դիմանկարը, Հովհ. Թադևոսյանի[2], Վահան Տերյանի և ուրիշ պատկերները, որոնք պետք է հանձնվեն պետական թանգարանին։

Նախագահ հնությունների և գեղարվեստի հուշարձանների
պահպանության կոմիտեի՝ Մ. Սարյան

Ֆ. 122, ց. 1. գ. 278. թ. 3։ Բնագիր։ Ձեռագիր։

4

Երևանի Շահազիզի նամակը Մ. Սարյանին՝ Նոր Նախիջևանի հայկական թանգարանը Երևան տեղափոխելու մասին

17 փետրվարի, 1922 թ.
Նոր Նախիջևան

Սիրելի Մատիեոս

Անցյալ նոյեմբերի վերջերին Մոսկվայից ստացած կարգադրության հետևանքով մեր շրջանի բոլոր թանգարանները, բացի Ձերկասկի ու Ռոստովի հին թանգարաններից, հայտարարվեցան փակված ու դրանց շարքում և մեր հայկականը։

Ներկայումս Յագդանովիչի պաշտոնը վարող Լավրսկին պաշտոնական թղթով հաղորդելով ինձ թանգարանիս փակման մասին, առաջարկում էր ինձ հարաբերության մեջ մտնել կամ տեղիս հայ հասարակության հետ՝ նրան հանձնելու թանգարանը, եթե նա հանձն առնե իր միջոցներով պահել նրան, կամ Հայաստանի հանրապետության հետ՝ նրան տալու թանգարանը, եթե նա հոժարի իր միջոցներով փոխադրել։

Բնականապես ես բանակցություն սկսեցի Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Պետրոսյանի հետ ու երկար գրագրությունից հետո կարողացանք լուսժողկոմից թույլտվություն ստանալ և փոխադրությունը ձեռնարկեցինք։

Ներկայումս ահա փոխադրում ենք թանգարանն իր ամբողջությամբ, որով և լրանում է մեր վաղեմի ցանկությունը։ Եթե մեջը կգտնես այնպիսի բաներ, որ իսկապես պետք չէր փոխադրել, ինչպես ես էի ցանկանում ու կարծում, այդ վերագրիր Մահտեսյանին, որ Պետրոսյանի բացակայության պատճառով իր վրա էր առել փոխադրության ղեկավարությունը, հապճեպ, ի վնաս իրեղենների կարգով ու մաքրությամբ տեղափոխելուն։

Կարծում եմ, որ դու, իբրև լավատեղյակ իրեղենների հանգամանքներին, հեշտությամբ կչոկես ու կդասավորես, եթե այս կամ այն էլ խառնված դտնես։ Ես ինքս անձամբ օրերով կանգնել ու իրեղենները տանել, տեղավորել չէի կարող, որովհետև վաղ առավոտվանից մինչև ուշ երեկո զբաղված եմ մասնավոր դասերով... Ես միայն օրը մի անգամ գնում էի ռուցմունքներ անում Սալտիկյանին, թե որը ու ինչպես պետք է անել։

Այս նամակս գրում էի քեզ, երբ քո նամակը ստացա։ Սիրով ընդունում եմ առաջարկած պաշտոնդ և շնորհակալ եմ քո վերաբերմունքի ու քո կատարած ջանքերի՝ մեր պաշտոնատեղերում ինձ հրավիրելու համար։ Բայց այս օրերում թանգարանիս հետ դալ չպիտի կարողանամ, տակավին ձյունամռան օրեր են ու հնարավորություն չկա երկու օրում պատրաստվելու ճանապարհի համար։ Վագոնն արդեն բեռնավորված կանգնած է ու չի կարող

իմ պատրաստվելուն սպասել։ Խոսք եմ տալիս քեզ, որ ապրիլ-մայիս ամիսներում, երբ եղանակները կտաքանան, անմիջապես ճանապարհ դուրս գալ, եթե մեր կառավարության ինձ անելիք տիրությունները պահպանեն իրենց դորությունը մինչև այդ ժամանակները։

Մեր ներկայացուցիչ Պետրոսյանը, գոնե, խոստանում է ինձ, դու էլ խնդրում եմ, որ այդ հանգամանքի մասին ուր և ում հետ հարկն է խոսես ու հասկացնես իմ գալու պայմանները։ Միասին աշխատել ենք այստեղ քեզ հետ ու ի մի հավաքել, դասավորել ու կազմել այս թանգարանը ու այժմ ինձ դրանից զրկելը շատ ու շատ զգալի է։ Ուրախ եմ, որ վերստին միասին պիտի աշխատենք դարձյալ նորեն մեր սիրած գործի վրա, բայց ավելի մեծ չափով ու այն [էլ] մեր հայրենիքում։

Վերջին երկու ամիսը թանգարանը թեև պաշտոնապես փակված էր, բայց դեռևս շարունակում էի հաճախել. մաքրում էի, նայում ու մխիթարվում...

Դու, երևի, ընդհանուր կառավարիչ ես, բայց կարծում եմ, որ գեղարվեստական մասն էլ քո ձեռքին պիտի պահես։ Գիտեմ, տեղումդ էլ ավելի. խոսող կա, քան գործող, իսկ մենք գլուխներս կախ մեր գործին պիտի լինենք։

Մեր թանգարանը, իհարկե, իր անունը պիտի պահի ու կազմի առանձին բաժին, ինչպես Ալեքսանդրապոլինը։ Ես կարծում եմ, որ նախիջևանից դեռևս շատ բան կարելի է հավաքել, միայն որ մեր այստեղի ներկայացուցչությունը արթուն լինի ու շահագրգռված՝ այդպիսի խնդիրներով։ Պետք է, որ նախիջևանցիք իմանան, որ տարված իրեղենները պահպանվում են խնամքով և Նախիջևանի անունով։ Նախիջևանցիք ինձ ու քեզ անպայման հավատում են, և դա գործի հաջողության համար մի մեծ բան է, որ ի նկատի պիտի ունենալ։

Պատկանյանի ժամացույցը և հեռադիտակը, վերջապես, գնել տվի, առաջ ձգելով Մահտեսյանին և Պետրոսյանին ու 15 միլիոն, որ ներկայումս մի մեծ բան չի։

Եվգենիոսը ունի այլ ևս իրեր, որոնց ցուցակը պիտի ուղարկվի ձեզ։ Այժմ իմ ծանոթ ու բարեկամներից մեկը իմ առաջարկությամբ ուզում է ծախել մեր կառավարությանը, ապրանքի փոխանակությամբ, բժշկական գործիքների մի հարուստ հավաքածու, ընտիր արտասահմանի գործ։ Հանձնաժողովը Մարտիրոս Աթոյանի մասնակցությամբ հավանել է։ Ցանկալի է, որ մեր կառավարության ձեռքն ընկնի ու ոչ ջհուդ բժիշկների, որոնք ցանկանում են մի տեսակ ձեռք գցել։ Ո՞վ է այդտեղ բժշկական մասի գլխավորը, խոսիր հետը, գուցե անմիջապես այդտեղից կարգադրություն լինի գնելու գինու կամ այլ ապրանքի փոխանակությամբ։

Քեզ հասանելիք թանգարանի ռոճիկից հատկացված է 290 հազար, մի գումար, որ, դժբախտաբար, այս րոպեիս չեմ կարող ուղարկել, որովհետև մեր քարտուղարը իր ռոճիկը չստացած լինելու պատճառով ստիպված է եղել ծախսել իր կարիքների վրա։ Ռոճիկը ստանալուն պես, անկասկած, կհատուցանեն։ Դու միայն գրիր, թե ո՞ւմ պետք է հանձնվի գումարը, որ ապահով քո ձեռքը հասնի։ Մենք թանգարանի երկու ամիսների ռոճիկը դեռ չենք ստացել։

Հայկական մատենադարանից հատընտիր գրքերը փոխադրելու խնդիրը մնաց՝ վագոնում տեղ չլինելու պատճառով։ Ես կաշխատեմ հետս բերել. թանդարանիդ մատենադարանի համար հարկավոր գրքեր են, ինչպես օրինակ՝

Փիլիպոս Վարդանյանի[1] գրքերը։ Ուղարկում եմ հանգուցյալի մնացած գրքերի ցուցակը, որ այրին կամենում է վաճառել։ Ընթերցեք և գնահատեցեք։

Բարևներ ինձնից ու Հեղինեից քեզ և տիկնոջդ։
Քո Ե. Շահազիզ

Հ. Գ. Նալբանդյանցի ցուցակագրված գրքերի հետ միասին տրված են և ոչ ցուցակագրվածները ևս ու մի 3—4 ձեռագիր, որ նոր ստացել ենք հանդուցյալ Հարություն Նալբանդյանից (դա նորերումս միայն, որ չէի ժամանել տակավին, ուսումնասիրել ու ցուցակագրել)։

Պատկանյանի ձեռագրերի դասավորության խնդիրը նույնպես դժվար կլինի, ուստի լավ կանես, որ այդպես կապած պահես, մինչև որ ես գամ, հասնեմ, նամանավանդ, որ կան և չցուցակագրվածներ, նոր ստացվածներ՝ Եվգենիոսից։

Ասմայանի սինին, նրա գնահատած արժեքը ժամանակին չհատուցանելուս պատճառով, ստիպվեցա ետ դարձնել, իսկ օղեշիշը նա Նվիրեց, որ նույնպես մտած չէ ցուցակի մեջ։ Չպետք է ցավել այդ մասին, որովհետև այդպիսի մեկ սինի ունենք արդեն և ավելի հին, իսկ դա համեմատաբար շատ նոր գործ է։

Անտես, բայց ոչ անծանոթ բարևկամ Պողոս Մակինցյանին բարևներս կմատուցես։ Կբարևես և Երվանդ Լալայանին և կհարցնես, թե արդյոք ինչ եղավ իմ «Աշտարակ» գրվածքը, որ պիտի տպագրվեր «Աղգագրական հանդեսում» ու արդյոք այդ հանդեսը պիտի շարունակի գոյությունը, թե ոչ։ Ասա, որ ես այդ հանդեսի համար պատրաստում եմ և մի ուրիշ ընդարձակ գրվածք «Ինքմավիր» վերնագրով, որ մի ժամանակ խոստացել էի նրան։

Հաղորդիր նույնպես, թե այդ ինչ գիտական ինստիտուտ է, որ հաստատվել է Էջմիածնում , ու ի՞նչ պայմաններով կարելի է ու պետք է անդամագրվել նրան ու աշխատակցել։ Ես կարդացի նրա հրատարակած «Շապուհ Բագրատունին» և շատ հավանեցի այդպիսի ձեռնարկության։

Շատ բան ունեմ ասելու, խոսելու, բայց բոլորը նամակով անհնարին է։ Կգամ այդտեղ և ձեր բովանդակալից կյանքին մասնակից կլինեմ...

Ե. Շ.

5

«Արվեստաշեն» միության հիմնադիրների զեկույցները լուսժողկոմին՝ միության կանոնադրությունը հաստատելու մասին[1]

1 դեկտեմբերի, 1922 թ.
Երևան

Ներկայացնելով Երևանում աշխատող արվեստի մշակների՝ «Արվեստաշեն» կուլտուրական միության կանոնադրությունը, Նախաձեռնող խմբակը խնդրում է Ձեզ նրա քննության ու հաստատության հարցը դնել Հայաստանի Ժողովրդական կոմիսարների խորհրդի առաջ ի պարզաբանություն իր կազմակերպության հիմքերի, անհրաժեշտ է համարում Ձեր ուշադրությունը հրա-

վիրել այն խոշոր հարցի վրա, որից մինչև այսօր գգալիորեն տուժել է մեր երկրի գեղարվեստական կուլտուրան։ Հայ գեղարվեստագետները միանգամայն ցրված են եղել և այդ հանգամանքից հարկադրված՝ առանձին առանձին ուժերով են ստիպված եղել իջնել գեղարվեստական կուլտուրայի ասպարեզ, մինչդեռ Հայաստանի պայմանները թե՛ առաջ, և թե՛ առավելապես այժմ, խորհրդային կարգերում հրամայականորեն առաջադրում են գեղարվեստական ստեղծարար աշխատանքի սկզբունքը, որի կիրառման միջոցով միայն կարող է բեղմնավոր արտահայտություն և արգասավոր թափ ստանալ գեղարվեստական կուլտուրայի աշխատավորների եռանդը։

«Արվեստաշենը» հետևելով խորհրդային այլ երկրներում և մասնավորապես Ռուսաստանում գոյություն ունեցող հար և նման բազմաթիվ կուլտուրական հիմնարկների փորձին և օրինակին, կոչված է հավաքական աշխատանքի շուրջը հայտնաբերել իր բոլոր անդամների ստեղծագործական կարողությունները, հնարավորություններ տալ նրանց աշխատանքներին պլանաչափ ընթացք տրամադրելու և ապա՝ իր ուժերը ի սպաս դնելով արվեստի բոլոր ճյուղերին, հանրության և լայն մասսաների սեփականություն դարձնել այն ամենը, ինչ ձեռք կբերվի նմանօրինակ աշխատանքի միջոցով և նրա շնորհիվ։

Միանգամայն համոզված լինելով մեր խնդրի բարեհաջող լուծման և կառավարության ընդառաջող քայլերին, «Արվեստաշենի» սկզբնական շրջանում, նախաձեռնող խմբակը չի կասկածում, որ կուլտուրական այս կարևոր և անհրաժեշտ հիմնարկին կտրամադրվի համապատասխան շենք, ուր նա կարող կլինի ծավալել իր աշխատանքները և ապա՝ մի որոշ գումար, որպես նպաստ այդ աշխատանքները սկսելու և իր գոյությունն ամրապնդելու համար։ Ցորոշելով այդ միանվագ նպաստի չափը և թողնելով այն ժողկոմխորհի հայեցողությանը, նախաձեռնող խմբակը նախատեսում է կառավարական օժանդակության մի այլ ձև, այն է՝ պարբերական ամսական նպաստ՝ մոտավորապես երկու հարյուր (200) ռուբլի ամիսը պետական կուրսով։

Նախաձեռնող խմբակը խնդրում է Ձեզ, ընկեր կոմիսար, ընթացք տալ այս դիմումին և փութացնել նրա լուծումը, նկատի առնելով այն հանգամանքը, որ նման կուլտուրական միության գոյությունը և նրա գործունեության նպաստավոր պայմանները ըստ ամենայնի դյուրացնելու են մեր լայն խավերի գեղարվեստական զարգացման և առաջադիմության գործը։

Այս համոզմանն է՛լ ավելի օժանդակ է հանդիսանում և այն ակներև փաստը, որ նախաձեռնողները բոլորն էլ պատկանում են խորհրդային կուլտուրական աշխատանքներին լծված մտավորականների թվին, ըստ իրենց ուժերի կարյաց աշխատում են նպաստել Հայաստանի կուլտուրական շինարարությանը, և, որ գլխավորն է՝ բնավ նպատակադիր չեն այդ միությունից ստեղծել մի մեկուսացման կենտրոն՝ կտրվելով մասսաներից, միջավայրից ու ժամանակի ոգուց։

Ի վերջո, նախաձեռնող խմբակը անհրաժեշտ է համարում հայտնել Ձեզ, որ ցանկալի է գտնում իր ներկայացուցչի մասնակցությունը ժողովրդական կոմիսարների խորհրդի այն նիստին, ուր քննվելու է ներկայացված կանոնագրությունը և այս դիմումը, թե՛ պաշտպանելու համար նրա ամբողջությունը, թե՛ պարզաբանելու նրա այս կամ այն կետը և թե՛ մասնակից լի-

Նելու նրա որոշ փոփոխություններին, եթե այդ անհրաժեշտ կնկատվի Ժող. կոմիսարի կողմից։

Նախաձեռնող խմբակ

Մ. Սարյան, Ցուան Խանդաղյան, Ստ. Զորյան, Տիգրան Հախումյան, Մամիկոն Դևորգյան, Տիգրան Նալբանդյանց, Ռոմանոս Մելիքյան, Մ. Մանվելյան, Լ. Քալանթար, Կոստան Զարյան, Վահան Թորոսյանց

Ֆ. 112, ց. 1. գ. 58, մ. 3։ Բնագիր։ Ձեռագիր։

6

Письмо директора Государственной Третьяковской галереи народному комиссару просвещения ССРА с благодарностью за принесение в дар картины М. Сарьяна «Горы»

12 мая 1925 г.
Москва

Правление Государственной Третьяковской галереи приносит Вам глубокую благодарность за принесение Вами в дар Третьяковской галерее картины М. С. Сарьяна «Горы», которая является ценным вкладом в собрание произведений М. С. Сарьяна, принадлежащих галерее.

Директор Государственной Третьяковской галереи *Н. Щекотов*

ф. 122, оп. 1, д. 157, л. 88. Подлинник. Машинопись.

7

Письмо директора Русского музея заведующему художественным отделом Центрального государственного музея Армении с благодарностью за принесение в дар картины Сарьяна «Пестрый пейзаж»

4 июня 1925 г.
Ленинград

Отношением 2-го апреля с. г. за № 3696 Вы доводите до сведения директора Русского музея о постановлении Народного Комиссариата ССР Армении принести в дар Русскому музею одну из бывших на выставке в Венеции[1] картин работы Сарьяна.

Означенное постановление было заслушано на заседании Совета художественного отдела 14-го апреля с. г., и так как Наркомпрос ССР Армении предоставил право выбора Русскому музею, то Совет художественного отдела поручил бывшему в то время в командировке в Москве хранителю отделения рисунков и гравюр — В. В. Воинову выбрать одну картину из общего числа работ М. Сарьяна.

Выбор В. В. Воинова остановился на картине под названием «Пестрый пейзаж» (Армения).

Этот знак внимания, оказанный Народным Комиссариатом Просвещения ССР Армении и принятый Советом художественного отдела с живейшей признательностью, побуждает Русский музей, со своей стороны, обратиться к Вам с просьбой — взять на себя труд передать Наркомпросу ССР Армении глубокую и искреннюю благодарность за этот дар, представляющий ценный вклад в собрания художественного отдела.

И. о. директора Русского музея[2]
Заведующий художественным отделом *П. Нерадовский*

ф. 122, оп. 1, д. 157, л. 91. Подлинник. Машинопись.

8

Отношение представителя ССРА в Париже в Совнарком ССРА об увеличении выдиваемой суммы М. Сарьяну

24 января 1927 г.
Париж

Сарьян много работает. Саркис[1] распорядился выдать по сто рублей [в] месяц. Крайне недостаточно, прошу увеличить до двухсот [рублей]. Телеграфируйте.

С. Пирумов

ф. 113, оп. 2, д. 1256, л. 3. Копия. Телеграфный бланк.

9

Телеграмма Наркомпроса ССРА представителю ССРА в Париже об увеличении выделяемой суммы М. Сарьяну

27 января 1927 г.
Ереван

Размер выдаваемого Сарьяну пособия увеличить двести [рублей] [с] января месяца.

А. Мравян

ф. 113, оп. 2, д. 1258, л. 5. Отпуск. Машинопись.

10

Մ. Սարյանի նամակը Ա. Մռավյանին՝ Փարիզում իր գործուղումը երկարացնելու մասին

[1927 թ.]
Փարիզ

Խոստացել էի քեզ մի քանի բան էլ գրել մեր Թանգարանի և հնություն-ների վերաբերյալ։ Ներկայումս մի երկու ամսով այստեղ եկած է նկարիչ

Հովսեփ Փուշմանը[1], որը «Ակնիս» ընկերության[2] նախագահն է։ Ես խոսակցություն ունեցա հետը, թե նկար մը նվիրի Հայաստանի պատկերասրահին, քանի որ նրա նկարներից ոչինչ չկա։ Ինչպես երևում է մի քիչ վիրավորված էր և պատասխանեց ինձ հետևյալը. «Երբ որ պատկերահանդես ունեի հոս, ինձ ոչ որ ոչ մի խոսքով չդիմեց։ Այն ժամանակ ես կարող էի նկար մը նվիրել», և այլն։

Ես առաջարկում եմ հետևյալը, եթե դու հարմար կգտնես, թող Դրամբյանը[3], իբրև գեղրաժնի վարիչ, մի քանի խոսքով անձամբ դիմի Փուշմանին, որ նկար մը նվիրև թանգարանին։ Ես համոզված եմ, որ կհաջողվի։ Պետք է ասել, որ նա ապահովված մարդ է։ Այս օրերս գալու է մոտս, ես նրան նորից կհիշեցնեմ։

Հասցեն այսպես է[4]...

Նորերս այստեղ բացվել է ուրիշ հայ նկարչի նկարահանդես... Ընդունակ մարդ է, նրա գործերից էլ մի հատ արժեր ունենալ, բայց ինչպես անել, խելքս չի կտրում, գուցե Սիմոնիկի[5] հետ խոսեմ փոքրիկ գումար հատկացնի, մի բան դուրս գա։

Երբ տեսնում եմ այստեղի հոյակապ թանգարանները, միշտ միտս է գալիս մեր թանգարանը, իհարկե, համեմատություն չի կարող լինել։ Բայց մի բան շատ պարզ է, որ մեր թանգարանը իսկապես դառնալու է համաշխարհային թանգարան, իհարկե, ոչ թե յուր նոր կամ նորագույն մշակույթի էքսպոնատներով, այլ պատմահնագիտական նյութերով։ Այդ տեսակետից Հայաստանը ներկայացնում է անսպառ նյութ։ Իհարկե, այդ հնությունները ձեռք բերելու, հավաքելու համար պետք է ավելի միջոցներ տրամադրել, քան անում ենք մինչև հիմա։ Վերջապես մեր հոյակապ հնությունները լիակատար ապահովության մեջ պետք է դնենք և ոչ թե սառնասրտորեն նայենք, թե ոնց այդ բոլորը մեր աչքի առաջ քանդվում և փուլ է գալիս։ Իհարկե, տգետ չարամիտներ էլ կան, որ ուրախանում են դրանից։ Մեր նոր կյանքի շինարարության մասերից մեկը պետք է կազմի և հնությունների պահպանումը։ Մեր երկրի բոլոր քաղաքացիները պետք է լավ հասկանան, որ այդ հնությունները առագայում արդյունքի աղբյուր պետք է դառնան, ինչպես ուրիշ կուլտուրական երկրներում։

Մեր թանգարանը, օրինակ, կարող է հրաշալի խաչբարերի ժողովածու ունենալ։ Մեր քթի տակ հայտնի Ջուղայի գերեզմանաքարերը անուշադիր, անապահով մնացած են, արժեր լավագույն օրինակները վերցնել և տեղափոխել մեր թանգարանը։ Մենք խաչբարերի հիանալի նմուշներ ունենք։ Մեր հնությունների պահպանության կոմիտեն անելու շատ բան ունի, եթե միջոցներ ունենա։

Ի միջի այլոց, ես խնդրում եմ ուշադրություն դարձնես եգիպտական հնությունների փոքրիկ հավաքածուի վրա, որը ես նվիրել էի մեր թանգարանին։ Այդ իրերը 1910 թվականին ես բերել եմ Եգիպտոսից։ Մոսկվայի..... որը ունի բավականին լավ եգիպտական բաժին, ինձնից ուզել է, ես չտվեցի. հույս ունենալով ապագայում նվիրել Հայաստանի թանգարանին։ Այդ իրերի մեկ մասը Լայպզիգը ցուցադրել է, իսկ մյուս մասը, ով իմանա, որ անկյունն է շպրտված, մեկ մասն էլ մոտս է, որը չտվի, տեսնելով նրա անհոգի վերաբերմունքը։ Այդ իրերի համար արժեր ունենալ հատուկ վիտրին կամ պահարան՝ հնագիտական բաժնում։ Այդ իրերը մեր համեստ թանգարանին

մի բան ավելացնում են, քանի որ եգիպտական հնություններ կան..... մեզ միայն..... Լենինգրադ և.... Մոսկվա։ Իհարկե, մեր կոլեկցիան ոչ մի կերպ չի համեմատվի նրանց հետ, այնուամենայնիվ արժեքավոր է և եգիպտական բարձր կուլտուրայի մասին որոշ գաղափար է տալիս։ Մի բան էլ ուզում եմ գրել։ Գրիգոր Շուրթաբչյանը[6] ունի մի հատ լավ նկար՝ «Սայաթ Նովա», որը ներկայացնում է հետևյալը. Սայաթ Նովան սազը ձեռին երգում է, մի քանի կանայք նրան լսում են, բոլորն էլ նստած են ծալապատիկ, կարպետի վրա։ Եթե առիթ լինի, արժեր առնել այդ նկարը մեր թանգարանի համար։

Մի քանի խոսք էլ իմ մասին։ Մի երկու շաբաթից հետո մի խումբ ռուս հնարիչներ նկարահանդես են կազմակերպում, ինձ էլ հրավիրել են մասնակցելու—ուզում եմ տասը նկարով հանդես գալ։ Այդտեղ մասնակցելը այնքան էլ հեշտ չէ, եթե ուզենաս լավ տեղում ցույց տալ նկարներդ։

Հավատացած եմ, որ դեմ չես այստեղ մեկ տարի էլ մնալուս։ Գուցե հնարավոր է գործուղումը լրացնել։ Գրիր փոքրիկ թերթիկ մը այդ բովանդակությամբ։ Ուզում եմ Լուսիկին՝ էլ բերեմ, քանի որ միտսին երկու անգամ կրճատվում են ծախսերը։ Լուսիկը գրել է, որ թոշակս չինել եք 150 ռուբլի. շատ ուրախ եմ։ Այստեղ ընտանիքով ապրելու համար պետք է 250 ռուբլի՝ ամիսը։ Ես գրել եմ Աշոտին[8], Արտաշեսին[9]։ Եթե թոշակը 150 ռուբլի լինի, 100 ռուբլի ամսական կխնդրեի փոխարինաբար, որը կվերադարձնեմ փողով կամ գործերով։

Ընդունիր ընկերական բարևներս։
Քո Մարտիրոս

Լուսիկը քեզ մոտ կխոսի։
Բարևի՛ր տիկնոջդ, գրի՛ր։

Ֆ. 122, ց. 2ա, գ. 178, թ. 94։ Պատճեն։ Մեքենագիր։

11

Письмо представителя «Арменторга» в Батуми Совнаркому Армении о принятых мерах по розыску утерянных картин[1] М. Сарьяна

30 апреля 1928 г.
Батуми

Из числа затерявшихся и погибших грузов на пароходе «Фрижи» частями прибывают некоторые грузы, выгруженные при пожаре в Константинополе.

Полагая, что в числе них могут оказаться картины художника Сарьяна, просим Вас следующей почтой выслать нам обратно посланные нами при письме за № 1517 документы, касающиеся трех ящиков картин.

На днях ожидается прибытие парохода из Константинополя, если на этом пароходе не окажутся упомянутые выше ящики, то мы не за-

медлим сделать срочный запрос в Константинополь для окончательного выяснения судьбы этих картин.

Врид. управляющего *А. Сантурян*
Счетовод *В. Балаян*

ф. 113, оп. 4, д. 10345, л. 18. Подлинник. Машинопись.

12

Письмо представителя «Арменторга» в Батуми в Совнарком ССРА об уцелевших от пожара немногочисленных картинах М. Сарьяна на пароходе «Фрижи»

11 октября 1928 г.
Батуми

Сообщаю, что в числе оставшихся после пожара в Константинополе на пароходе «Фрижи» спасенных грузов, доставлен в Батум 1 ящик картин. Ящик этот сегодня был лично мною досмотрен и картины оказались совершенно попорченными и едва ли пригодными. Из общего числа картин, в количестве 10 штук, сравнительно меньше пострадали портрет тов. Сарьяна (*«Իմ նկարը»*) и вид армянского села, а остальные 8 картин, изображающие большею частью разные фрукты, почти на 90% повреждены и едва ли целесообразна будет их реставрация. Все рамы от картин попорчены, а стекол вовсе не осталось.

Одновременно сообщаю, что для выкупа этих картин, помимо уплаты пошлины и прочих таможенных сборов, следует уплатить пароходному обществу аварийного сбора в размере 60% с фактурной стоимости груза.

В случае выкупа эта сумма после будет возвращена страховым обществом, а если тов. Сарьян найдет нецелесообразным выкуп, то страховое общество уплатит полностью страховую сумму.

Ввиду приближения к концу ликвидационной работы агентства прошу ответ сего ускорить.

В случае выкупа картин необходимо ходатайствовать о предложении срока лицензионного разрешения, каковой истек 5-го мая.

Уполномоченный по ликвидации агентства Арменторга в Батуми
А. Сантурян

ф. 113, оп. 4, д. 10345, л. 28. Подлинник. Машинопись.

13

Письмо представителя «Арменторга» в Батуми в Совнарком ССРА о состоянии уцелевших от пожара картин М. Сарьяна

31 октября 1928 г.
Батуми

Вследствие просьбы тов. Сарьяна мною вторично были досмотрены картины, полученные после пожара, причем содержимое ящика и состояние картин и описание их следующее:

1. Пейзаж — на переднем фоне пасутся козы.
2. То же—козы пьют воду у речки.
3. То же — вдали горы, у подошвы гор поля, перед ними протекает речка.
4. Плоды — лимоны, апельсины и бананы в раме.
5. В правом углу изображен портрет мужчины, в раме, под портретом, плоды (апельсины, бананы, дыни и баклажаны). Слева от портрета ваза с цветами (в раме).
6. Уголок татарского села: в правом углу у дома сидят двое персиян и на крыше дома — персиянки в чадрах.
7, 8 и 9. Загрязнены и неразборчивы.
10. Разорван, остались на картоне клочки от картин.

Все картины без исключения запачканы и обожжены так, что некоторые из них неразборчивы, а некоторые слегка понятны.

Некоторые из них в рамах, а некоторые без них. Все рамы испорчены

Касаясь дальнейшей судьбы этих картин, сообщаю, что согласно существующих правил в таможне, по истечении предельного срока, примерно через год, картины эти будут распроданы с торгов.

В данное время абсолютно нет смысла их выкупать, уплачивая за них крупную сумму, тогда как, при продаже с торгов, можно приобрести их за бесценок.

Возвращая при сем имеющиеся у нас документы, как то: коссемент в 2 экземплярах и лицензия в 2 экземплярах, прошу заметить, что остальные документы, т. е. фактура и страховой полис возвращены были Вам 29/III при письме за № 1517, кои нами обратно не были от Вас получены.

Уполномоченный по ликвидации агентства Арменторга в Батуми
А. Сантурян

ф. 113, оп. 4, д. 10345, л. 29. Подлинник. Машинопись.

14

Постановление Совнаркома ССРА о финансировании художника М. Сарьяна для участия в оформлении парижской международной выставки

8 декабря 1936 г.
Ереван

Предложить Наркомфину из резервного фонда Совнаркома отпустить 3000 рублей на расходы по командировке народного художника Армении тов. Сарьяна М. С. в Москву для участия в оформлении парижской международной выставки.

Заместитель Председателя Совнаркома ССРА *А. Шахсуваров*
Заместитель Управделами Совнаркома ССРА *А. Арутюнян*

ф. 113, оп. 4, д. 10353, л. 1. Подлинник. Машинопись.

15

Ходатайство управления по делам искусств при Совнаркоме Арм. ССР о выдвижении на соискание Сталинской премии М. Сарьяна

2 января 1940 г.
Ереван

Художественный совет Управления [по] делам искусств при Совнаркоме Армянской ССР выдвигает [на] соискание Сталинской премии работу народного художника Мартироса Сергеевича Сарьяна панно Советского павильона международной выставки [в] Париже, [в] 1936 году, получившее [на] указанной выставке премию и золотую медаль.

Управление по делам искусств Армении
Шагинян

ф. 598, оп. 3, д. 41, л. 3. Копия. Машинопись.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

1. Խոսքը Մշո ս. Առաքելոց վանքի դռան մասին է, որ 1916 թ. տարվել է Թիֆլիս։ Այժմ գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում։
2. Մմբատ Տեր-Ավետիսյան (1875—1943)—պատմաբան-հնագետ։

3

1. Հմայակ Արծաթքանյան (1876—1919)—նկարիչ։ Ծնվել է Նոր Նախիջևանում, սովորել Մոսկվայում և Պետերբուրգում. աշակերտել է նկարիչ Վ. Ա. Սերովին։ Զոհվել է քաղաքացիական կռիվների ժամանակ։
2. Հովհաննես Թադևոսյան (1889)—նկարիչ։ Ուզբեկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ։ Ծնվել է Երևանում, սովորել Մոսկվայում։ Բնակվում է Սամարղանդում։

4

1. Փիլիպոս Վարդանյան (1842—1917)—իրավաբան, թարգմանիչ։ Զբաղվել է մանկավարժությամբ՝ սկզբում Նոր Նախիջևանում, ապա Գևորգյան ճեմարանում։
2. Խոսքը Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի մասին է, որը կազմակերպվել էր Հայհեղկոմի 1926 թ. փետրվարի 5-ի դեկրետի հիման վրա։

5

1. Նախաձեռնող խմբակի առաջարկին լուսժողկոմ Ա. Մռավյանը պատասխանել է. «Լուսժողկոմատին կից կազմակերպվում է գիտությունների և արվեստից ինստիտուտ, որի մեջ մտնում են «Արվեստաշենի» հեղինակները։ Առայժմ թողեք սույն կանոնադրության հաստատման խնդիրը, մինչև որ ինստիտուտը կվակերպվի, որից հետո «Արվեստաշենի» գոյությունը կկորցնի իր իմաստը...» (Հայաստանի Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 112, ց. 1, գ. 58, թ. 1)։

7

1. Վենետիկի ցուցահանդեսը կազմակերպվել է 1924 թ. հունիսին։
2. Ստորագրությունն անընթեռնելի է։

8

1. Խոսքը, ամենայն հավանականությամբ, պրոֆեսիոնալ հեղափոխական, պետական ու հասարակական նշանավոր գործիչ, Անդրֆեդերացիայի ժողկոմխորհի նախագահի տեղակալ Սարգիս Լուկաշինի (Սրապիոնյան, 1884—1937) մասին է։

10

1. Հովսեփ Փուշման (Փուշմանյան, 1877—1966)—ամերիկահայ նշանավոր նկարիչ։

2. «Անիս ընկերությունը հայ արվեստագետների խմբակցություն է, որ հիմնադրվել է Փարիզում՝ 1926 թ.։ Ընկերության նպատակն էր միավորել Ֆրանսիայում և սփյուռքի այլ վայրերում ապրող հայ արվեստագետներին՝ ցուցահանդեսներով ու երեկույթներով եվրոպական հասարակությանը ծանոթացնելու հայ մշակույթին, զարգացնելու ազգային արվեստի ավանդները, պրոպագանդելու Սովետական Հայաստանի մշակութային հաջողությունները, նպաստելու Հայաստանի պատմության պետական թանգարանի հարստացմանը։

3. Ռուբեն Դրամբյան (1891)—արվեստաբանության թեկնածու։ 1925—1950 թթ. աշխատել է Հայաստանի պատմության պետական թանգարանում՝ որպես բաժնի վարիչ։

4. Այս և հետագա բացթողումները բնագրային են։

5. Խոսքը Ֆրանսիայում ՍՍՀՄ դեսպանության քարտուղար Սիմոնիկ Փիրումանի մասին է։

6. Նկատի ունի նկարիչ Գրիգոր Շարբաբչյանին (1884—1942)։

7. Խոսքը իր կնոջ՝ Լուսիկ Սարյանի մասին է։

8. Աշոտ Հովհաննիսյան (1887—1972)—պատմաբան, ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ։ Այդ ժամանակ՝ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար։

9. Արտաշես Կարինյան (1886)—իրավաբան, հրապարակախոս, գրականագետ, հին բոլշևիկ, ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ։ Այդ ժամանակ՝ Հայաստանի Կենտգործկոմի նախագահ։

11

1. Նկարները ցուցադրվել էին 1925 թ. հունվարի 28-ին Փարիզում կազմակերպված ցուցահանդեսում։